

րերով զարդարուած արգաղիւր խոշոր խաչ մը, որ միշտ կը մնար հոն. հաւատացեալները և ուխտաւորները հոն կը կատարէին իրենց ուխտը. և երբեմն *Խաչէն առջև* (*ante crucem*) տեղի կ'ունենային խաչի տօնական հանդիսութիւնները, որոշ օրերու մէջ, ինչպէս որ տեսանք վերև: Գողգոթան տանիք չունէր. բացօթեայ էր. երկու կողմը միայն կային կամարակապ սրահներ, և ժողովուրդը պաշտամունքի ժամանակ կը կենար այն տեղը և վերջնոյս տնքաւականութեան պարագային՝ քովի հրապարակը կը տեղաւորուէր: Ինչպէս մեր Ճաշոցը, նոյնպէս Ուխտաւորուհին՝ մատուռ անունը կու տան Գողգոթայի ետեւ շինուած եկեղեցիին: Այս մատուռը ունէր երկու դուռներ, որ թոյլ կու տային ժողովուրդին արարողութեան ժամանակ անարգել կատարելու իր երթևեկը. տեղի անձկութեան պատճառաւ հաւատացեալները կը խռնուէին հարաւի կողմէն մատրան կից կողմնակի սրահներուն մէջ. մինչ կզերը կրնար մնալ մատրան մէջ: Մատրան մասնակի երկու արարողութիւններն էին Աւագ հինգշաբթի երեկոյեան պատարագը և Աւագ ուրբաթ առաւօտեան խաչի երկրպագութիւնը: Խաչէն զատ հաւատացեալներու յարգանքին համար ի տես կը դրուէին խաչի արձանագրութեան տախտակը, Խարաչէի թագաւորաց օծման եղջիւրը և Սողոմոնի կնիքը, ինչպէս կը կարգանք Էթէրիայի Օրագրութեան մէջ:

Սակայն Եւսեբիոս *Հարաւ* անունը կը գործածէ Քրիստոսի Գերեզմանին վրայ կառուցուած բուն իսկ Ս. Յարութեան տաճարին համար, յենլով ա՛յն պատճառին թէ գերեզմանի մը վրայ հիմնուած նուիրական շէնքը պէտք է կոչել մատուռ կամ վկայարան: Բայց այս մասին Եւսեբիոսի հատուածը չատ վճիտ չէ. միևնոյնը կը հասկցնեն Աթանաս և Յերոնիմոս, ինչպէս նաեւ Կիւրեղ Երուսաղէմացին՝ յենլով Սոփոնիայի մարգարէութեան վրայ (Գ. 8): Բայց Էթէրիայի հետ կը միանայ Սողոմոնոս և կը յարէ թէ «մեծ մատուռն է այն տաճարը, որ շինուած է Երուսաղէմի մէջ, Գողգոթայի վրայ»:

Չորրորդ դարու վախճանին սակայն, ամէն ինչ յստակ է: Կ'որոշուին երկու տաճարները, «Ս. Եկեղեցին, որ Գողգոթայի վրայ շինուած է և զոր կը կոչեն մատուռ», և «այն Ս. Եկեղեցին՝ որ է Անաստասիս», այսինքն «ա՛յն տեղը ուր մեր Տէրը իր չարչարանքներէն յետոյ յարեաւ ի մեռելոց». ասոնք ա՛յն երկու